ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է ՀՀ Արմավիրի մարզի Այգեվան համայնքում մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/6 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2022 թվականի նոյեմբերի 2-ին կնքված N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/6 գնման պայմանագրում 2023 թվականի մարտի 20-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N1	ՀՀ կառավարության 29.12.2022թ. N2111-Ն որոշում:
Փոփոխության նկարագրություն	N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/6 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցների հատկացում:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 8.5 և 8.14 կետեր:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
02.11.2022թ. կնքված N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/6 գնման պայմանագրի

ք. Երևան 20.03.2023թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Շին>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու)՝ ի դեմս տնօրեն Ա. Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 29.12.2022թ. N 2111-Ն որոշումը և ՀՀ Արմավիրի մարզի Այգեվան համայնքում մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 02.11.2022թ. կնքված ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/6 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.14 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 Հաստատել 2023 թվականի օրացուցային գրաֆիկը և վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի N 1 և N 2 հավելվածների:

1.1.2 Պայմանագրի 6.4 կետում ավելացնել նոր պարբերություն հետևյալ խմբագրությամբ՝

«Յուրաքանչյուր տարվա համար աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկով սահմանված ընթացիկ ժամկետը (ները) խախտելու դեպքում՝ Պատվիրատուն Պայմանագրով նախատեսված տույժի գումարը Կապալառուի կողմից կատարողական փաստաթղթերի ներկայացման օրվա դրությամբ հաշվարկում և Պայմանագրով սահմանված կարգով պահում է Կապալառուին վճարվող գումարներից, որը՝

- փոխանցում է (հաշվանցում է) ՀՀ պետական բյուջե, եթե նույն տարվա օրացուցային գրաֆիկով սահմանված վերջնաժամկետին հաջորդող օրը առկա է կատարման ենթակա, սակայն չկատարված (սահմանված ժամկետում չներկայացված կատարողական փաստաթղթեր) աշխատանքային ծավալ,
- չեղարկում է տույժի հաշվարկն ու պահված ամբողջ գումարը վճարում Կապալառուին, եթե նույն օրացուցային գրաֆիկով սահմանված վերջնաժամկետում Կապալառուն կատարել է այդ ժամանակահատվածի համար նախատեսված աշխատանքային ամբողջ ծավալը:»:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը և Համաձայնագրի N 1 և N 2 հավելվածները կազմված են 1 (մեկական) էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 և N 2 հավելվածները համարվում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	«ՇԻՆ» ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք. Երևան, Եկմալյան փ, շ. 6/55
կառավարական տուն 3	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 163003978646
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 02630537
Հ/Հ 900011038115	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
Ա. Մկրտչյան	Ա. Խաչատրյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	

Հավելված N 1
02.11.2022թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/6 գնման պայմանագրի
20.03.2023թ. կնքված N 1 համաձայնագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ Արմավիրի մարզի Այգեվան համայնքում մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման 2023թ. վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցով նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում կատարվելիք աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ

N	Գումարը (ՀՀ դրամ)	Կատարվելիք աշխատանքների ներկայացման վերջնաժամկետը
1	35 249 100	31.03.2023թ.
2	140 996 500	30.06.2023թ.
3	352 491 300	30.09.2023թ.
4	704 982 800	10.12.2023թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011038115
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
«ՇԻՆ» ՍՊԸ
ք. Երևան, Եկմալյան փ, շ. 6/55
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163003978646
ՀՎՀՀ 02630537

Տնօրեն՝

_____ Ա. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
02.11.2022թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/6 գնման պայմանագրի
20 .03 .2023թ. կնքված N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հերթով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	2022թ. վճարված գումար	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում										
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45221142/3	ՀՀ Արմավիրի մարզի Այգեվան համայնքում մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքներ	30 000 000	-	-	35 249 100	140 996 500	140 996 500	140 996 500	352 491 300	352 491 300	352 491 300	704 982 800	704 982 800	704 982 800	704 982 800

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011038115
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
«ՇԻՆ» ՍՊԸ
ք. Երևան, Եկմալյան փ, շ. 6/55
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163003978646
ՀՎՀՀ 02630537

Տնօրեն՝

_____ Ս. Խաչատրյան
(ստորագրություն)

Կ.Տ.

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
Գլխավոր գրասենյակ
Հասցե՝ ՀՀ, Երևան, 0002,
Ամիրյան փող. 23/1
Հեռ.՝ +37410 510 910, 86 86
Ֆաքս՝ +37410 538 904
Էլ. փոստ.՝ bank@aeb.am
www.aeb.am

ARMECONOMBANK OJSC
Head office
23/1 Amiryan str., 0002, Yerevan
Republic of Armenia
Tel.: +37410 510 910, 86 86
Fax: +37410 538 904
E-mail: bank@aeb.am
www.aeb.am

N 33.2-08/105 «16» Դեկտեմբեր 2023թ.

ԵՐԱՇԽԻՔ
(որակավորման ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է **Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի** (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից **ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/6** ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում **«ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության** (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից **02.11.2022թ-ին կնքված թիվ ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/6 պայմանագրի Համաձայնագիր 1-ով** նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով **«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն** (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **211,494,840 /երկու հարյուր տասնմեկ միլիոն չորս հարյուր իննսունչորս հազար ութ հարյուր քառասուն/ ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի **900008000664** հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև N **ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/6 պայմանագրի Համաձայնագիր 1-ը** ուժի մեջ մտնելու օրվանից մինչև կնքված պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման վերջնաժամկետի օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ՝ մինչև **31.05.2024թ.**: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N **ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/6** կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու և/կամ բավարարելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման և/կամ բավարարման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր տնօրեն՝ **Ա. Խաչատրյան**

Գլխավոր հաշվապահ՝ **Մ.Պողոսյան**

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
Գլխավոր գրասենյակ
Հասցե՝ ՀՀ, Երևան, 0002,
Ամիրյան փող. 23/1
Հեռ.՝ +37410 510 910, 86 86
Ֆաքս՝ +37410 538 904
էլ. փոստ.՝ bank@aeb.am
www.aeb.am

ARMECONOMBANK OJSC
Head office
23/1 Amiryan str., 0002, Yerevan
Republic of Armenia
Tel.: +37410 510 910, 86 86
Fax: +37410 538 904
E-mail: bank@aeb.am
www.aeb.am

N 33.2-08/106 «16» Դեկտեմբեր 2023թ.

ԵՐԱՇԽԻՔ
(պայմանագրի ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է **Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի** (այսուհետ՝ բենեֆիցիար) և **«ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության** միջև 02.11.2022թ-ին կնքված թիվ ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/6 պայմանագրի Համաձայնագիր 1-ից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:
2. Երաշխիքով **«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն** (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **73,498,280 /յոթանասուներեք միլիոն չորս հարյուր իննսունութ հազար երկու հարյուր ութսուն/ ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի **900008000664** հաշվեհամարին փոխանցման միջոցով:
3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:
4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:
5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև կնքված N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/6 պայմանագրի Համաձայնագիր 1-ն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև կնքված պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման վերջնաժամկետը, ներառյալ երաշխիքային ժամկետի (365 օրացուցային օր) օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ՝ մինչև **31.05.2026թ.**: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:
6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝
1) N **ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/6** պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.
2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:
7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:
8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝
1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.
2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:
9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու և/կամ բավարարելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման և/կամ բավարարման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:
10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:
11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր տնօրեն **Ա. Խաչատրյան**

Գլխավոր հաշվապահ **Մ.Պողոսյան**